

Հետեւեալ յօդուածն , որ պատասխան է մի Ռուս լրագրի եւ ուշադրութեան արժանի խորհրդածութիւններ կը պարունակէ Ազգայնութեան և մայրենի լեզուի մասին , Մեղու Հայաստանի լրագրէն առնելով կը ներկայացնենք մեր ընթերցողաց խորին մտադրութեանն :

### ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Տիֆլիսի Վեպսիկ Ռուս լրագրի այս տարուայ 25 և 27 համարներում տըպուած է մի անստորագիր նամակ Պետերբուրգից ազգայնութեան մասին՝ հանդերձ պատասխանով խմբագրութեան կողմից : Այս խնդիրը ընդհանրապէս և մասնաւորապէս Կովկասի վերաբերութեամբ այնքան մանրամասն քննած է երկու կողմից եւս , որ մենք կարող էինք բաւականանալ միայն ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելով այդ համարների վերայ , որպէս զի ինքն և իր համոզմունքը կազմէ , խորին համոզուած լինելով , որ մեր ընթերցողների մեծ բազմութիւնը ռուսերէն կարդալ գիտէ , Բայց ինքը հեղինակն այդ խնդիրը իր յօդուածի մէջ չէ թէ վճռած է համարում , այլ դորա մասին յայտնում է իւր խորհրդածութիւններն և հրաւիրում է ընթերցողին եւս խորհրդածելու : Եւ խնդիրն այս է՝ Ի՞նչ է ազգայնութիւն , — արդեօք դա այնքան անսրայման հարկաւոր եւ թանկագին բան է , որ դորա պահպանութեան համար , եթէ հարկաւոր լինի , պէտք է զոհենք ուրիշ բոլոր անձնական եւ ընկերական բարիքը . թէ դա մի այն պիտի պայմանաւոր բան է , որ երբեմն յարմարութիւն՝ երբեմն և անյարմարութիւն է մեզ պատճառում , այնպէս որ շատ անգամ իրաւունք կ'ունենանք

զոհել դորան յօգուտ մեր միւս մտաւոր կամ ընկերական շահերի : — Հեղինակը քաջ դժաւոր , որ ինքն այն ազգայնութեան է պատկանում , որն որ տիրապետող է մեր մէջ , աւելացնում է , թէ գուցէ նա չի կարողանայ լինիլն հասկանալ այն ազգութիւնների մաքերն և զգացմունքներն , որոնք տիրապետող ազգի հպատակ են , ուստի և խնդիրը չի վճռում , ինչպէս ասացի , այլ առաջարկում է լոկ միայն իւր խորհրդածութիւնները : Հեղինակին շատ լաւ յայտնի են այն ապացոյցներն , որով որ ազգայնութիւնն երբեմն պաշտպանուել է , բայց և ամեն իրաւամբ մի հայեացք է ձգում պատմական իրողութեանց վերայ , ուր այս խնդիրը աւելի խճճուած և դժուար լուծիլ է հանդիսանում , — Նամակը գրած է մեծ զգուշութեամբ և հմուտ գրչից , ուստի աւելորդ չի լինիր , որ մենք եւս նորա մտքերի շղթային մէկ մէկ հետեւենք , որպէս զի նորա ճիշդ հայեցումները հասկանանք և տեսնենք , թէ որտեղից են բղխում նորա վերջնական համակրութեանց աղբիւրները : —

Նա ասում է , թէ երբեմն հպատակ ազգերը նեղութիւն են կրում տիրապետող ազգերից և կռիւ են բաց անում նոցա դէմ : Զոր օրինակ Իտալացիք Աւստրիացւոց դէմ . այժմեան Հերցեգովինացիները Տաճիկների դէմ պատերազմում էին և պատերազմում են օտար և ճնշող լուծից ազատուելու համար : Այսպիսի դէպքերում ազգայնութիւնը միշտ համարուել է մարդոյս վսեմագոյն և թանկագին շնորհ , որը պաշտպանելու համար ամեն տեղ համակրութիւն է գտել : Մենք համակրում ենք , որովհետեւ այդտեղ ազգայնութիւնը ցանկալի ազատութիւն է գտնում , եւ մենք ի հարկէ պատերազմին չէինք համակրի ,



եթէ հպատակ եղած պատերազմորէն-  
քը հարկաւոր ազատութիւն վայելել  
էին : (Ընթերցողը պէտք է նկատէ , որ  
գեռ այն հարցը անլուծանելի է միա-  
ցել , թէ արդեօք եթէ մի բարեկարգ  
տէրութեան մէջ հպատակ ազգերը  
հարկաւոր ազատութիւն վայելում են ,  
պէտք է նորա իրանց ազգայնութիւ-  
նից հրաժարուին յօգուտ տիրապե-  
տող ազգի , թէ չէ ) : Մենք այսպէս ծա-  
նօթացանք այնպիսի դէպքերի հետ ,  
ուր ազգայնութիւնը միջոց է դառնում  
այնպիսի բարձր նպատակի համար , որ  
մարդուս անպայման եւ անհրաժեշտ  
կարեւոր է : Բայց նայն պատմութիւնը  
ցոյց է տալիս , թէ ազգայնութիւնը  
երբեմն գործիք է եղել ոչ թէ ազա-  
տութեան եւ անկախութեան համար ,  
այլ հակառակ նպատակների համար :  
Հեղինակը տաւ , թէ մեր դարուս  
մէջ գերմանական ազգայնութիւնը  
այդ օրինակն է ցոյց տուել (??) :

Մեր դարու սկզբին գերմանական  
ազգային զգացմունքը վերաւորած էր ,  
որովհետեւ նորա վերայ իշխում եւ տի-  
րապետում էր Գաղղիային ( Բօնա-  
պարտը ) : Այս գրութիւնը Գերմա-  
նացուն օգուտ էր ( ? ) , բայց գերմա-  
նական տէրութիւնների համար ան-  
յարմար : Ուստի այդ տէրութիւննե-  
րը զարթեցնում եւ բորբոքում էին ազ-  
գային զգացմունքը , որով եւ կարողա-  
ցան վերջապէս գաղղիական իշխանու-  
թիւնը գահավիժել : Գաղղիացիներից  
ազատուելով , Գերմանացիք կարծում  
էին , թէ նորա ամեն լծից ազատուե-  
ցան , ազատ կը շնչեն , երջանիկ կը  
լինին : Բայց խեղճերը շատ խաբուե-  
ցան : Նորա շուտով համոզուեցան ( ? ) ,  
որ գերմանական լուծը գաղղիականից  
թեթեւ չէ , եւ անկեղծ ազգասէրները  
սխեցին ջաւել ( ? ) , որ Գաղղիայից ա-  
զատուեցան 1848ին Գերմանացիք դա-  
ռեալ վառուեցան ազգային զգաց-  
մունքով եւ ուղում էին ազգային միու-  
թիւն հաստատել , բայց այդ ժամա-  
նակ էլ ազատութեան համար ազգայ-  
նութիւնը ոչինչ արդիւնք չտուեց :  
Գերմանիայի ազգային զգացմունքը մի-  
այն այն էր , որ ուղում էր Գանիայից  
Շլեզվիգը խլել , որ եւ Պրուսիայի ա-  
ռաջնորդութեամբ կատարեց : Պրու-  
սիան այսուհետեւ դառնում է մի զի-  
նուորական պետութիւն , Պրուսիան  
Աւստրիային հանում է գերմանական  
դաշնակցութիւնից , Պրուսիան Գաղ-  
ղիայից խլում է Էլզաս եւ Լօթարինգը ,  
եւ այս բոլորը կատարում է յանուն ազ-  
գայնութեան , ամենեւին չը հարցնե-  
լով , թէ արդեօք ազգերը ազատու-  
թիւն ստացան այդպէս , թէ աւելի  
ճշլեցան : ( Թէպէտ եւ բերած օրինա-  
կը լաւ չի մշակում հեղինակը , բայց  
մենք դարձեալ համաձայն ենք նորա  
հետ , ինչ որ նա ապացուցանել կա-  
րենում է , այսինքն թէ երբեմն ազ-  
գայնութիւնը գործիք է դառնում չէ  
թէ ազատութեան համար , հասա-  
նդ հակառակ ճիշդութեան համար ,  
բռնի զօրութեան համար եւ նոցա ա-  
խոյեանների անխախտ պահպանու-  
համար ) :

Գերմանական ազգայնութիւնը , շա-  
րունակում է հեղինակը , մի ուրիշ կող-  
մից եւ հանգիստում է : Գերմանա-  
ցիին վերին աստիճան դաղթասէր է .  
նա իսկոյն թողնում է իւր հայրենիքը ,  
եթէ ուրիշ տեղ լաւ գործք կարող է  
գտնել : Բայց եթէ այնտեղ երջանիկ է ,  
նա դարձեալ չի լուծվում այնտեղ ,  
իր ազգայնութիւնը մաքուր պահպա-  
նում է , մնում է ազգասէր , հայրե-  
նեաց « մուսն » անգամ սիրելի եւ ախոր-  
ժելի է նորան , թէպէտ եւ փախել է այդ  
միւրից : Այդպէս են զոր օրինակ գեր-  
մանական գաղթականները Ռուսաւ



տանում, որ տեղ նորա տարիներով մնում են, բայց իրանց հայրենիք չէ թէ Ռուսաստան, հապա Գերմանիան համարում են: Գուցէ այստեղ նորա ասեն, թէ իրանց ազգայնութիւնը Ռոսից աւելի բարձր, աւելի լուսաւորուած է, Բայց նոյն Գերմանացին ազատ Ամերիկայի մէջ եւս՝ նոյն հին Գերմանացի է մնում: Այս ինչպէս բացատրենք. նորա պապերը թշուառ էին, բայց Գերմանացի մնացին, նա փախաւ այդ թշուառութիւնից եւ դարձեալ մնում է Գերմանացի հոգւով և պապերի համակրութիւնները, հակակրութիւնները, նախապաշարմունքները պահպանում է: Միթէ այս մի տեսակ հնամուտութիւն չէ, Եթէ դժբա մի տեղ բաղմութիւն կազմէին և այդպէս յամառ մնային իրանց ազգայնութեան մէջ, էլի հասկանալի կը լինէր, բայց ահա Օստդէի գաւառների մէջ Գերմանացիք փոքրութիւն են կազմում և դարձեալ եռանդով պահպանում են իրանց գերմանական ազգայնութիւնը Էստերի և Լատիշների վերայ: — Կարճ, մենք տեսնում ենք, որ ազգայնութիւնը երբեմն ազատութեան լծակ է դառնում, իսկ երբեմն ճնշելու, երբեմն անհասկանալի հնամուտութիւն, և երբեմն միւս ազգաբանութեանց վերայ իշխանութիւն պահպանելու միջոց է: (Եթէ ազգայնութեան վերայ միայն այս չորս կէտից պէտք է նայենք, այն ժամանակ յոյս ունիմ, աւմեն ընթերցող կամ կը համաձայնի հեղինակի յայտնած գաղափարների հետ, այսինքն թէ ազգայնութիւնը երբեմն յօգուտ և երբեմն ի մնաս կարելի է դործածել. բայց թէ արդեօք մի մեծ խաղաղական մարմնի մէջ փոքր ազգայնութիւնները իրենց ազգայնութիւնից պէտք է հրաժարուեն, թէ չէ, այս մնում է դեռ մի բաց խնդիր, որ ինչպէս կը տեսնուի,

հեղինակն էլ հարցնում է լուծելու համար):

Հեղինակը գիտէ, որ իր ընթերցողն ուրիշ ազգայնութեան է պատկառում, քան թէ ինքը: Նա հարցնում է, թէ ինչպէս նա միանայ իր ընթերցողների հետ, ինչպէս է ըմբռնում ընթերցողն իր ազգային յատկութիւններն և մինչ մը աստիճան թանկ է նորա համար այդ յատկութիւնների անխախտ պահպանութիւնն, և եթէ կամենում է պահպանել, ինչ պատճառներով: Նա առաջուց համաձայնում է մի բանի մէջ, այսինքն թէ ամեն ազգութիւն պէտք է թողնել, որ ազատ զարգանայ և բնական ճանապարհով միւսների վերայ ազդէ, ամենեւին գործ չածելով արուեստական միջոցներ, բռնութիւն, ճնշողութիւն, չղորացրելով մէկի ազդեցութիւնը, որպէս զի միւսը ջնջուի: Այս ենթադրութիւնից յետոյ, նա դարձեալ հարց է դնում՝ մին աւելի ցանկալի և օգտաւէտ է, որ արդեօք պահպանութիւն ազգութիւններն իրանց տարբեր յատկութեանց և առանձնութեանց մէջ, թէ մերձեանան միմեանց կամ մինչ անգամ խառնուին եւ մի ազգութիւն կազմեն բաղմակողմանի ձեւերով: (Եթէ հեղինակը մի ազգութեան փոխարէն՝ մի խաղաղական կազմութիւն ասէր, աւելի որոշ միտք յայտնած կը լինէր, ուր Բալթիկ միջոցների յետն էլ աւելի իմաստ կը ստանար: )

Հեղինակը այժմ խնդիրը մասնաւորում է Կովկասի վերայ, ուր զարմանում է նորա երեւելի երեւոյթների վերայ թէ բնութեան և թէ կեանքի մէջ: Արդարեւ՝ Կովկասի բնութիւնը ներկայացնում է հոյակապ, հարուստ և մեծաքանակ փոփոխութիւններ, Կովկասը զարմացնում է իւր տեսակ տեսակ ազգաբանական, պատմական, հը-



նագիտական, կրօնագիտական և լեզուագիտական իրողութիւններով: Եւ մի՞թէ հետաքրքիր չէ այս բոլոր գիտական խաղաղութեանց համար, որ մի նեղ տեղի մէջ այսքան բազմաթիւ տակ կեանք և բնութիւն ամփոփուած է: Անտարակոյս այս կէտից նայելով, ցանկալի է, որ Կովկասի բոլոր ցեղերն և ազգերը իրանց առանձին ազգային յատկութիւնները անփոփոխ պահպանեն, որ նոքա չը խառնուին և չանհետանան: Բայց այս մի յարմարութիւն է գիտութեան համար, որ ազգերի համար մեծ անյարմարութիւն է: Մի թէ նոքա պէտք է անփոփոխ կենան և ապրեն լոկ միայն իբրեւ առարկայ գիտական խաղաղութեանց համար, և ոչ թէ իբրեւ մարդիկ, որոնք կարօտութիւն ունին կենդանանալու և ընդունակ են զարգացման համար (Այստեղ հեղինակը հասնում է այն կէտին, ուր պէտք է մի վերջնական եղբայրացութիւն տայ):

Ամեն ազգ, ասում է նա, ունի իր յատուկ հոգեկան կազմութիւնն, որ իր մարմնական (ֆիզիօլոգիական) կազմուածքին համեմատ է: Մարդուս կամքից է կախուած ազգայնութեան գլխաւոր միջոցը, այսինքն լեզուն, որ բոլ մարդիկ միմեանց հետ բարոյապէս հաղորդակցում են, կրթվում և զարգանում են, և նա է միակ ընդունաբան գիտութեան և փորձի: Ուրեմն Կովկասից լուսաւորութիւն կարող են ստանալ միայն լեզուով, բայց մեր հիշտ է, արդեօք նախ կրթել և զարգացնել ամեն ազգի առանձին լեզուները և նոյա միջնորդութեամբ լուսաւորութիւն տարածել թէ արդէն պատրաստ մի օտար լեզու այդ բոլոր ազգերին ուսուցանել, որպէս վի նորա միջնորդութեամբ լուսաւորութիւն տարածուի: Հեղինակը կարծում է թէ երկ-

րորդ միջոցը՝ աւելի օգտաւէտ է, որովհետեւ, ասում է, արդիւնքը կարճ միջոցի մէջ կ'երեւայ: Քանի շատ լեզուներ կան, աւելացնում է նա, այնքան հաղորդակցութիւնը կը դժուարանայ ազգերի մէջ և ուրեմն մէկի լուսաւորութիւնը մնալով չի գտնիլ միւսի մէջ: Մի քանի ազգերի ընդհանուր գրականութիւնն աւելի հարուստ կը լինի, քան թէ իւրաքանչիւր ազգի գրականութիւնն առանձին առած: Կարճ, վերջ ի վերջոյ հեղինակը ցանկանում է, որ Կովկասից իրանց առանձին հոգեկան կազմութիւնն եւ մայրենի լեզուն պահպանելով, աշխատեն նախ և յառաջ ընդհանուր Ռուսաց գրականութիւնը ուսանելու, հարստացնելու և զարգացնելու համար: Թէպէտ և այդ լեզուն էլ շատ լուսաւորուած չէ, չունի շատ մեծ արժանաւորութիւններ, հարուստ չէ, ինչպէս ինքն է ասում, բայց նա գործնական նպատակներին եւս ծառայել կարող է, այսինքն պաշտօնական յարաբերութեանց մէջ թեթեւութիւն կուտայ: Այստեղ յօդուածը վերջանում է, բայց ընթերցողը կը նկատէր, թէ հեղինակը մէկին և պարզ չը ներկայացրեց հոգեկան կազմութեան, ֆիզիօլոգիական կազմութեան, մայրենի լեզուի, օտար լեզուի և ճշմարիտ կրթութեան ու զարգացման միմեանց հետ ունեցած յարաբերութիւնքը, կամ թէ հեղինակը անպատասխան է թողնում այն հարցը՝ էլ ինչո՞ւ համար հարկաւոր է ազգերին իրանց հոգեկան առանձին կազմութիւնն և մայրենի լեզուն պահպանել, եթէ օտար լեզուով ճշմարիտ կրթութիւն և զարգացում, ուրեմն և լուսաւորութիւն ստանալ կարող են, էլ ինչո՞ւ է կամենում մի ազգայնութիւն Բալթիկի յետ-երով:

Տիֆլիսի Վեստիկի խմբագրութիւն



նը որստախաաններով այդ նամակին՝ խընդիրը ուղղակի ըմբռնում է մանկավարժական կողմից, այսինքն եթէ մենք կամենում ենք լաւ լուսաւորել մի ազգ, արդեօք օտար լեզուով կարող ենք հասնել մեր նպատակին, և բացասական պատասխան է տալիս, օրինակ բերելով մեր կեանքից սուած կրթութեան արդիւնքը: Մենք եւս այդ կէտի վերայ պէտք է կանգնենք և ցոյց տանք, նախ թէ ճշմարիտ կրթութիւնն ու զարգացումը ի՞նչպէս է ձեռք բերվում, և ինչ դեր է խաղում այդ տեղ լեզուն, որպէս զի յետոյ իրաւունք եւս ստանանք գատաւձիւ կարգալու նորա վերայ:

Ինչպէս տեսանք հեղինակը մի գովելի նպատակ ունի տչքի առջեւ, երբ նա հարցնում է ընթերցողին, թէ ինչպէս համար պահպանում ես գուքս աղգայնութիւնդ, քո լեզուդ: Եւ ընթերցողը հարցնում է իրան, — արդարեւ ինչո՞ւ համար ունիմ ես երկու ձեռք, մի քիթ. ինչո՞ւ համար մտածում եմ, զգում եմ այնպէս, ինչպէս որ ես միշտ ածել և զգալ կարող եմ: Վեր առնենք ձեռքերս, քանի քանի չարութիւններ են դոքա գործել, քանիոն արտասունք են թափել տուել, քանի սին թշուառութեան մէջ են ձգել, բայց չուտով միտքը փոխվում է եւ հարցնում՝ իսկ քանի բարութիւն են կատարել, քանի արուեստ են ստեղծել, քանի երջանկութեանց պատճառ են եղել դոքա: Կարճ, մարդուս կեանքի մէջ շատ կան այնպիսի հարցեր, որոնք եթէ մի անգամ զարթեցան, միշտ անվերջ վիճաբանութեանց առարկայ են դառնում, դոքա են բոլոր «ինչու հարցերը» այն միջոցների մասին, որոնք որ և իյէ մի բարձր նպատակին ծառայում են կամ հրաժարվում են ծառայել: Եթէ մենք դոցա մասին հար-

ցնենք ինչո՞ւ, մենք երբեք պատասխան չենք ստանալ: Որովհետեւ ինչո՞ւ հարցը յարմար է միայն նպատակի համար և ոչ թէ միջոցների համար: Այնպիսի իրողութիւններն, որոնք որ բնական օրէնքով ստեղծվում են և մեր կեանքի մէջ գործիչ են հանգիստանում, էլ մեր իշխանութեան չեն ենթարկվում, ուստի մենք պէտք է հաշտուենք նոցա գոյութեան հետ, թէպէտ և նոքա մեզ երբեմն անյարմար են: Ուրեմն մէկդ թողնելով այդպիսի զուր հարցերը, մենք ընդհակառակը շուտով պիտի այն ճանապարհը գտնենք, որով որ դոքա մեր վաճաճ նպատակներին յարմարութեամբ ծառայել կ'ընեն: Ինչպէս պէտք է գործ ածենք դոցա մեր նպատակի համար, ահա այս է ուղիղ հարցը: — Փիլիսոփայութեան պատմութեան մէջ անթիւ անգամ կրկնուել է այն իրողութիւնը, որ ճիշդ և ուղիղ ապացուցութիւններով մարդիկ վերջի վերջոյ բնութեան հակառակ եղբակացութեան են եկել: Եւ այս բանը բացատրվում է նորանով, որ մտքի ըզբթայի առաջին օղակը սխալ ենթադրութիւն է եղել: Մեր հեղինակը նախ և առաջ ենթադրում է, որ եթէ մենք մեր աջ ձեռքը կտրենք, մարդկութիւնը երջանիկ կը լինի: Այս ենթադրութիւնը լռելեայն դաւանելուց յետոյ, ստեղծում է մի ապացուցական չէնք, ճշմարիտ գեղեցիկ եւ զմայլական է: Այնտեղ ասվում է, թէ ազգերը ազատ պիտի զարգանան, արուեստական միջոցներով պէտք է կրթուին, թէ մի ամբողջ ընկերութիւն բաղմակողմանի ձեւ պիտի ունենայ, թէ ամեն ազգ ունի իւր առանձին հոգեկան կազմութիւնն, որ իր ֆիզիքալ բաղադրանքների համեմատ է (?), թէ այդ փոխել մենք չենք կարող, թէ ազգերը իրանց հոգեկան կազմութիւնն ու մայ-



րենի լեզուն պէտք է պահպանեն. մէկ խօսքով այս այն ապացոյցներն են, որոնցով որ միայն կարող էր արժարձան ինդիրը լուսաբանուիլ: Այս ասելուց յետոյ վերջացնում է, թէ դուք պէտք է ձեր մտաւոր հաղորդակցութեանց համար օտար լեզուն, օտար գրականութիւնը ընտրէք, և այս օգտաւէտ է ինչպէս ձեզ համար նոյնպէս և այն ամբողջութեան համար, որի մի անդամը դուք էք: — Ես կարծում եմ, որ այս վերջին միտքը ուղիղ տրամաբանութեամբ այն ապացոյցներից չի հետեւում, և որպէս զի ուղիղը գտնենք, մենք պէտք է նախ և յառաջ բացատրենք, թէ ի՞նչ է ազգութիւն, լեզու և զարգացում:

Շատ անգամ տեսած է, թէ իւրաքանչիւր ազգ մի միտք էակ է նոյն պէս և իւրաքանչիւր անհատն առանձին առանձին, այսինքն, թէ այն օրէնքները, որոնք որ իւրաքանչիւր անհատին հոգւով զարթեցնում և կատարելութեան հասցնում են, նոյնութեամբ գործում են և ամբողջ ազգի մէջ: Բայց ի՞նչպէս է հասել ազգը այդ միութեան, անտարակոյս նախ և յառաջ արտաքին պատճառներով: Մարդիկ մի տարածութեան մէջ դրացի են եղել և մի նոյն ժամանակում միմեանց յաջորդել են, և այդպէս կազմել են մի ազգ: Առաջին պատճառից գոյացիւ է ազգի աշխարհագրական. իսկ երկրորդ պատճառից — ազգի պատմական առանձնութիւնը: Այստեղից հետեւում է երկու բան՝ նախ որ լոկ միայն արեւնակցութիւնը (մեր հեղինակի առանձն ֆիզիօլոգիական կազմուածքը) ազգութիւն չի տալիս, զոր օրինակ՝ մի Հայ մանուկ, որ առաջին օրից Մոսկւայի մի Ռուս գերդաստանի մէջ մեծանում է, նա էլ Հայ չէ՝ ազգայնութեամբ, նա

Ռուս է և պէտք է ռսերէն կրթուի, որպէս զի նա բազդաւոր լինի: Եւ երկրորդ՝ որ մի և նոյն աշխարհագրական տեղի մէջ երկու և աւելի ազգութիւնք կարող են միասին ապրել, զոր օրինակ՝ Թիֆլիսում՝ Հայ, Վրացի, Ռուս ևւայն, որոնց և պատմական ծագումը մի և նոյն չէ: Բայց այդ Հայն՝ էլ այն Հայը չէ, որ երբեմն Անիի մէջ նստած իւր բուն մայրենի հողի զաւակն էր համարում. այն ժամանակից նա հազար տեսակ պատմական ազդեցութեանց մէջ անցնելով՝ մտաւ Վրացոյ ազդեցութեան տակ և ապա սոցա հետի միասին՝ Ռուսաց ազդեցութեան տակ, նոյնպէս և Ռուսը այն Ռուսը չէ, որ իւր մայրենի լայնատարած գաղտնի վրայ բնակուած՝ ուրիշ արեւակ էր տեսնում, ուրիշ օդ էր ծծում, այն սարերի վերայ՝ օտար ազգութեանց մէջ խառնուած: Բայց մի թէ սոքա խաղաղ կրտսեր են իրանց բնական կապը հին հայրենեաց հետ: Ոչ, որովհետեւ կայ մի հանգամանք եւս, որ թէպէտ և նոյնպէս պատմական, բայց կարծես աւելի ֆայտն կապ է հաստատում արտաքին աշխարհքի և մարդուս ներքին հոգեկանի դրութեան մէջ, որի գլխաւոր օրինակը լեզուն է, ազգային հոգւոյ առաջին արտայայտիչը: Ամեն ազգ ունի իւր ազգային հագուստն, ազգային սովորութիւն, վարք և բարք, բայց նորա ոչ մէկ յատկութիւնն այնպէս ճիշդ նկարագիր չէ իւր ազգութեան, ինչպէս լեզուն, որ ազգի պատմական զարգացման հետ հաստատ չալել է անո՞մ: Միտք և խօսք — միշտ երկուորեակ են, քանի մէկը զարգանում է, միւսն էլ այնքան նրան հետեւում է: Զէ թէ այնպէս են մարդիկ և ազգեր, ինչպէս որ նոքա ուտում և խմում են, աշխատում և աղօթում են, կառուցանում և կառավարում են, այլ այնպէս, ինչպէս որ



նորա խօսած են : Լեզուն է մարդուս  
բուն հոգեկան կենաց շտեմարանը ,  
լեզունով է իմացվում , թէ մարդս ինչ  
է : Ուստի ծիծաղելի է այն մարդը ,  
որ ուրիշ հոգեկան շտեմարան ունի  
մտքի մէջ , բայց գործածած լեզուն  
նորան համապատասխան չէ : Ծիծա  
ղելի է նա Վաճառականը , որը սովոր  
ութեամբ , բարքով , վարքով , կրօնով  
բաղադրանից է ծագում , բայց դարձ  
է ածում ուրիշ լեզուական դործիք՝  
այդ իր մտաւոր շրջանը արտայայտե  
լու համար . ծիծաղելի է ասում եմ  
չալթայի — բալթայի խօսող բաղադ  
րանցին : Ամենեւին ծիծաղելի չէ մի ե  
րիտասարդ , որ բնական ճանապարհով  
այնքան զարգացել է , որ հասկացել է  
Ռուսաց լեզուի առանձին յատկութիւ  
նը , հասկացել է այդ ի բնէ իրան օտար  
հոգեւոր կեանքը և մի որոշեալ չափ  
բարձրացել է Առամուկոլիքան աստի  
ճանի վերայ , և այդ լեզուն իւր մտքերի  
թարգման է լինել , բայց և այդ ժաւ  
մանակ նա բողբոլին գերծ չէ մայրենի  
հնչունի աղբեղութիւնից , որից բող  
բոլին աղատուել երբէք չի կարող : Մի  
այն լեզուն է , որ աղբերին այդպէս  
բաժանում է միմեանցից . զարգացման  
միւս բոլոր հանգամանքները՝ ինչպէս  
բաղադրական կազմութիւնը , տնտեսա  
կան կարգը , ճարտարապետական , նը  
կարչութեան և երաժշտութեան սու  
գասիքը ընդհանրական յատկութիւն  
ունեն , դոքա ամեն մարդուն մատչելի  
են , որովհետեւ ամեն մարդ գոցա  
հասկանալ կարող է : Բայց դարձեալ  
նոյն հրաշալի լեզուն է , որ ճարհ հետ  
ի միասին զարգանում է , փոխվում է ,  
նա չի թողնում , որ աղբը անշարժու  
թեան մէջ մնայ և Շինական պատով  
փակուի ուրիշ աղբերի ներգործու  
թիւններից : Եւ ուրեմն մինչեւ որ մի  
աղբին կանոնաւոր կրթութիւն չտրը

ուի , մինչեւ որ նորա մտքի պաշարը  
չը հարատանայ , նորա լեզուն չի փոխ  
ուիլ . ուրիշ ամեն միջոց արուեստա  
կան կը լինի : Արթուրով ամեն աղբ  
կարօտութիւն է ասանում գործածել  
աւելի կատարեալ լեզու , և եթէ իր  
մայրենի լեզուն չի կարողանում պահելն  
համեմատ կատարեալ գործել , նա ըն  
դունում է ուրիշ օտար լեզու , որը ա  
ւելի իր գաղափարներին համեմատ է ,  
և այդպէս այդ աղբը պատմութեան  
երեսից բնականապէս ջնջվում է . այսպիւ  
սի օրինակներ պատմութիւնը ցոյց է  
տալիս անթիւ անգամ : Մտքի և խօսքի  
այսպիսի կապն եթէ լաւ կշռագատենք ,  
կը հասկանանք թէ , ինչու ամեն աղբ  
իւր լեզուն միշտ պաշաւ է : Ուստի  
ով որ հոգեբանութեան հետ ծանօթ  
չէ , միայն նա յիմարութիւն կ'անուա  
նէ այն հաստատութիւնն , որով որ  
աղբերը իրանց առանձնութիւնը պահ  
պանում են . զոր օրինակ՝ ո՞վ չի ասի  
թէ աղաբաւիւնը բարձր է քան աղբայ  
նաւիւնը , բայց եթէ մի աղբին մի շնչ  
չով կամենում ենք աղատութիւն չը  
նորհել , որպէս զի նորանից աղբայնու  
թիւնը հանենք այդ մի և նոյնն է , ե  
թէ ես մէկին ասէի , « թէ դու կարող  
ես մնալ , ինչպէս որ կամենում ես ,  
բայց ոչ այնպէս , ինչպէս որ դու ես և  
ինչպէս որ դու աւելի կցանկանաս մը  
նալ » :

Ի՞նչ նպատակին է հետեւում մեր  
նամակագիրը . նա կամենում է , որ այն  
բաղադրական մարմինը , որին որ միւս  
փոքր աղբութիւնները պատկանում  
են , այնպիսի ամուր և հաստատ կաղ  
մութիւն ստանայ , որն որ նորան վա  
յել է : Ի հարկէ այս այն կենսական  
հարցն է , որ ամեն մտածող անդամ  
իր վսեմ պարտքը պէտք է համարէ ,  
նոյնը խօսքով և գործով օժանդակե  
լու : « Բաղադրական մարմին » գաղա



փորը մի վերացական գաղափար է և բաղկացած է բազմաթիւ առանձին անհատներէրից: Ուրեմն եթէ կամենում ենք այդ գաղափարը իրագործել, պէտք է անհատներէրից սկսենք. և այդ պատճառաւ միշտ քաղաքականութիւնը համարուել է ամբողջ քաղաքական մարմնի համար այն, ինչ որ մտնկաւարժութիւնը առանձին անհատներէ համար է համարուում: Ուստի մենք ես մեր արծարծած խնդիրը զուտ մանկավարժական ենք համարում: Արդ ինչ է ուսուցանում մանկավարժութիւնը: Նախ և յառաջ նորան յայտնի է, որ մանուկը կարող է զարգանալ, կրթուիլ, բայց դիտէ նոյնպէս որ նա մանկան վրայ անսահման իշխանութիւն չունի եւ չի կարող նորանից ամեն բան չինել, ինչ որ ինքը կամենում է: Ընդհակառակն մանուկը կարծես իսկզբան մի այնպիսի հաստատ հոգեկան կերպարանք է ըստացել, որ իր ամբողջ կեանքի մէջ անխախտ պահպանում է, և որը իր կրթութեան եւ զարգացման առաջն է որպէս մի անդիմադրելի սահման է դրել: Զը նայելով մեր բոլոր աշխատութեանց մեր մանուկը վերջապէս այնպիսի յատկութիւններ է ցոյց տալիս, որոյ դէմ կրթութիւնը ՚ի զուր պատերազմել էր: Ամեն մէկ մանուկ ակամայ և առանձին կերպով ընդդիմադրում է արուեստական կրթութեան դէմ, կամ թէ նոյնը ընդունում է իւր առանձին տեսակ յատկութեամբ, և այս տեղ դաստիարակիչը այնքան անկարող է հանդիսանում, որ եթէ իւր արդիւնքից անբաւական է, դարձեալ ոչինչ փոխել չի կարող: Ամեն մարդ՝ մանկութիւնից սկսած մինչև սրտանեկութիւնն և ճերմութիւնը այնպիսի հոգեկան անփոփոխ նշաններ է ցոյց տալիս, որոնք ոչինչ արտաքին ազդեցութիւններէ չեն ջնջուում:

Մանկան այսպիսի սկզբնական կերպարանքը, որ կեանքի մէջ մեծաւ մասամբ անփոփոխ է մնում, եւ որ կրթութեան առաջ իբրեւ սահման երեւում է, կոչում ենք բնական ունեւորութիւն կամ ճանկան անկապաւնութիւն, ուր զանազանում ենք երկու մաս, որոնցից մէկը բնածին է, միւսը ստացական է: Հոգին ՚ի սկզբան ոչինչ կրթութիւն չունի, զոր օրինակ՝ ՚ի սկզբան նորան յատուկ չէ ոչ Բարին և ոչ չարը, նա յետոյ, այսինքն առաջին օրից սկսած՝ երբ մարմնի հետ կապուած փոխադարձ ներգործութեանց մէջ մանում է և այդպէս կրթուել է ըսկըսում, հակվում է կամ մի կողմ կամ միւս կողմ: Ուրեմն բնածին ունակութիւնն աւելի մարմնի մէջ պէտք է որ ըսենք, Բայց եթէ մարմինը ՚ի բնէ մի օրգանական արտասութիւն չունի, զոր օրինակ՝ եթէ մի որ և իցէ զգայարանից զուրկ չէ, մարմնի ազդեցութիւնը հոգւոյ վերայ մեծ չք պէտք է համարել: Նորա ազդեցութիւնը միայն այնքան է, որ հոգեկան գործունէութիւնը դժուարանում կամ դիւրանում է, մեծ կամ փոքր արդիւնք է ունենում, արդելում կամ օժանդակում է: Այս տեղից է ծագում, որ մէկը շուտ է կատարում մի բան՝ ինչի համար ուրիշն աւելի ժամանակ պիտի գործածէր, մէկի մտքերը թեթեւութեամբ շարժվում են, միւսի մէջ ծանր են հասում, մէկը կարողանում է մի և նոյն ժամանակ շատ մտքերի վերայ իշխել՝ միւսը քիչ մտքերի վերայ, մէկի մէջ մտքերն աւելի սարդ և խորքից զարթնում են՝ միւսի մէջ խառն և մակերեւոյթից, մէկը արամադրութիւն է ստանում մի տեսակ մտքերի և զգացմունքների համար՝ միւսը ուրիշ տեսակի համար: Անհատականութեան այն նշանը որ պայտական է կոչվում, ՚ի



տիղբան մանկան մէջ չեն եղել, այլ նա յարտաբուստ ստացել է: Մանկութեան մէջ ստացած ներգործութիւնները՝ աւանդաւոր եւ ամենից անջնջելի են. նուրանից է կախուած ոչ միայն առանձին մոքերի տեսակները, բայց եւ այդ մշտաբերի հարստութիւնն եւ ներքին կապակցութիւնն, ուրեմն եւ զգայմունքներն ու արամարգութիւնները, նայն պէս եւ այն թեթեւութիւնն, որով մոքերը մթութիւնից բարձրանում են եւ նոր մաքերով նորոգւում են: Այս բոլորն այն հանգամանքներից է կախուած, որ մանուկն աճում է, ուրեմն այն տեղից, ուր մանուկն իւր առաջին տարին անցուցանում է, այն տեղի կլիմայից, հողից, շրջակայքից, եւ վերջապէս մարդկերանցից, որոնց մէջ մանուկը պտտում է: Նախ յիշենք ընտանիքն եւ նորա մէջ իշխող ոգին, ապա եւ այն՝ որից որ այդ ոգին կախուած է, այսինքն հօր պարտապնդները, եկեղեցին, ծուխը, տէրութիւնը, ազգայնութիւնն իր պատմութեամբ եւ քաղաքակրթութեամբ. այդ ոգին յայտնւում է եւ այն մոքերով, զգայմունքներով, ձգտողութիւններով, այն նախապաշարմունքներով, սովորութիւններով, վարքով եւ բարքով, որ այդ շրջանի մէջ ընդհանրացած են: Նայնպէս ներգործում են եւ տան մէջ բնակուող մարդիկը, բարեկամները, ընկերակիցները, սոցա թիւը, հառակն եւ սեռը, ինչպէս եւ խաղն մէջ եւ ընտանեաց մէջ ստացած փորձերը: Մանուկն այսքան աղբիւրներից ներգործութիւններ է օտանում, որ մի շտեմարանի մէջ պահում է, այսինքն իւր մտքի եւ սորա երկուորեակ լեզուի մէջ:

Այսպիսի անհատականութեամբ մանուկը յանձնուում է դաստիարակչին: Ահա այն ամուր պատը, որ մանկան եւ դաստիարակչի մէջ կայ. եթէ

դաստիարակիչը կամենում է մէջը մտնել, նա պէտք է լաւ խաղարկէ եւ սահմանները ճանաչէ, նա պէտք է այն մուտքերը գտնէ, որտեղից մանուկն աւելի սիրով, աւելի յօժարութեամբ բացւում է, այսինքն նա պէտք է նոյն այդ անհատականութիւնը յարգէ եւ խնայէ, որպէս զի մանուկը նորան բարեկամութեամբ ընդունէ: Անհատականութիւնն եթէ մարդուս պակասութիւն է, նա է դարձեալ այն գերազանցութիւնն, որ հմուտ դաստիարակչի ձեռքն առաջին գործիք է դառնում կրթութիւն տալու ժամանակ: Մանկան անհատականութիւնը դեռ փախուկ է եւ կը փախուի, եթէ դաստիարակութիւնը անհասկացողութեամբ չէ ճնշում նորան, բայց կը դոյ ժամանակ, ուր նա այնպիսի սլնդութիւն եւ կարծրութիւն կը ստանայ, որ էլ անկարելի կը լինի մէջը մուտք գտնել՝ ուրեմն կանոնաւոր կրթութիւնը խամակիւն պէտք է սխալ, ապա թէ ոչ մենք կը ստանանք կրթութեան մէջ եղած, բայց կրթութիւն չպաշտօն մարդիկ: Զը գիտեմ արդեօք այժմ հասկանալի է ընթերցողին, թէ ի՞նչ է նշանակում, կրթութիւնն օտար ընդունով սկսել. մեր աչքի առաջ այդ նշանակում է սպանել մանկան կենդանութիւնը, որովհետեւ գործ դրած ժամանակը կորած է նորա համար, իսկ յետոյ երբ նորա գիտակցութիւնը զարթնի, արդէն ուշ կը լինի դաստիարակչի սխալն ուղղելու... շատ շատ նա կարողանայ միայն կարկատել իր թերի կրթութիւնը: Այդպէս կարկատած մարդիկ մենք այժմ շատ ունենք, մեր անկարգ կրթութեան շնորհիւ. այդպէս մենք քաղաքական մարմնի համար բոլորովին անընդունակ մարդիկ ենք ստարաստել, այս է ողբում եւ մեր նամակագիրը, բայց ախ-



սոս, որ նորա առաջարկած միջոցը չի կարող մեր վերջը լուսիչ: Մենք պէտք է լուսաւորութիւն բաժնով մոնենք մեր մանկանց մտքերի մէջ, բայց այդ բաժնը մայրենի լեզուն է, մենք պէտք է Ռուս սերէնը սովորենք, բայց նախ մայրենի լեզուն, մենք պէտք է Ռուսաց գրականութիւնը ճոխացնենք, եթէ կարող ենք, բայց մենք պէտք է նախ մեր գրականութիւնը հարստացնենք, եթէ անկեղծ կամենում ենք կողմնակի կերպով ծառայել և այն նպատակին, որ մեր նամակագիրը մեզ պարտաւորում է: Որպէս զի այս վերջին միտքը պարագծաւ չերեւոյ, աւելացնենք մի քանի խօսք: — Հեղինակը սրահանջում է, որ մենք մէկ անգամայն բարձի թուլ անենք մեր լեզուն, մեր գրականութիւնն և սկսենք ճոխացնել ուսերէնը, որովհետեւ, ասում է նա, աւելի հեշտ է պատրաստ զարգացած լեզուով ժողովուրդը լուսաւորել, քան թէ նախ տեղական լեզուն զարգացնել և ապա թէ դորա միջնորդութեամբ ժողովուրդը լուսաւորել: Այս թուաբանական խնդրի դէմ ես կամենում եմ մի ուրիշ թուաբանական խնդիր առաջարկել. — ո՞րը աւելի հեշտ է՝ 10,000 Հայ մանկանց միտքը Ռուսաց լեզուով լուսաւորել, քան թէ հայերէնով կրթութել, ես կարծում եմ, որ առաջին դէպքում 10,000 հասա գլխներ կունենանք, որոնց պէտք է մանկավարժական ռմբերով փշքենք, որպէս զի ըստ երեւութին մի արդիւնք ստանանք, իսկ երկրորդ դէպքում առանց ամեն արուեստական միջոցների եւ առանց փշքելու այնքան կարող ենք զարգացրնել, որ յետոյ գիւրութեամբ կ'ուսուցանենք և իւրեանց տէրութեան պաշտօնական լեզուն: Բայց մեր հեղինակն այնքան ազատամիտ է, որ մեր մայրենի լեզուն մեզ դործեալ թող-

նում է, նորա գլխաւոր միտքն այն է, որ մեր գրականութիւնից ձեռք վեր առնենք: Ի հարկէ նորա կողմից այդ մի անշուք խօսք է մեր վերաբերութեամբ, որ մեր հոգաւոր զարգացումը գլխից կրտում է, սակայն ճշմարիտ՝ դուցէ՛ այդ հարկաւոր է մեր ընդհանուր օգտի համար, միթէ զոհաբերութիւնը բարի գործքի համար մեղձանք պիտի լինի: Ես կարծում եմ, որ այստեղ էլ նա վատ է հաշուել տընտեսական օգուտը, ամեն մի նոր հայերէն շարագրութիւն հաղարար ընթերցողների ստացուածք է դառնում, ուրեմն ամեն մի նոր շարագրութեամբ հաղարար մարդիկ մի քայլ աւելի մերջենում են զարգացման ընդհանուր միջերէնին, այն ինչ այդ հաղարարներէից դեռ շատ քչերը կարողանում և տրամագրութիւն ունեն ուսերէն շարագրութիւն կարդալու: Տնտեսականութեան մէջ կ'օրհնէ՞ր և գրականութեան մէջ գլխի կ'բերէ՞ մի և նոյն նշանակութիւն ունին:

Բայց մեր հեղինակը կամենում է քաղաքական մարմիններքին միութիւնը: Ես եւս կարծում եմ, որ ամեն հպատակ նոյնն անկեղծ կը ցանկանայ, որովհետեւ նա ազատութիւն է գրտնում, նա պաշտպանութիւն է գրտնում, նա քաղաքակրթութիւն է՝ վաշտելում նորա մէջ, ինքն էլ ուրեմն պարտաւոր է նորա հետ որդիական սիրով միանալ: Միութեան համար ամենալաւ միջոցն է լեզուն, բայց մենք տեսանք վերեւ, որ մի ազգ եթէ իր լեզուից կամաւ հրաժարուի, լինչպիսի վնասներ է բարդում իր գլխին, այսինքն նորանից կը ճնշի մի կարկատած, անձեւ և անշուք ժողովուրդ, որով ոչ թէ ծառայութիւն, հապա ծանրութիւն կը պատճառէ տէրութեանը: Սակայն միութիւնը ոչ միայն լե-



գումով, այլ և ընդհանուր դադարափորներով, բարքով և ծառայութիւններով է լինում, այսինքն հոգեւոր, ընկերական և տնտեսական ընդհանուր շահերով :

Արեւմտեան եթէ հեղինակը մտաւոր և դրականական կապերը բարձր է դասում, քան ազգային և արեւակցական կապերը, ես իմ կողմից բոլորովին համաձայն եմ նորա հետ, բայց եթէ դորանով ուզում է ասել, թէ մենք

պէտք է հրաժարուենք մեր տղային և արեւակցական կապերից, այն ժամանակ նա մոռանում է, որ մենք հասարակ մարդիկ ենք, և մեզ բնութիւնը չէ տուել ոչ իշխանութիւն, ոչ այժայդակի կապերը. քակտելու համար: Մենք եւս չուզեցանք խնդիրը վճռել. այլ առաջարկում ենք լսի միայն մեր խորհրդածութիւնները :

Ս. Մանդինեան :

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ ՄԻՈՒՆԻ հրատարակութիւնն սակաւ ինչ ուշացաւ. ուստի և ժամանակագրականին մէջ խառն են Մարտի վերջին և Ապրիլի առաջին օրերու դէպքերն :

— Մեծ. Յակոբ էֆ. Աշրդեան, որ անմահ յիշատակներ ունի Ս. Աթոռոյս մէջ, և Մեծ. Սենեքերիմ էֆ. Մանուկեան, որ նշանաւոր է Պօլսոյ մէջ Աղբիւն մատուցած իւր ծառայութեամբ, կը գտնուին այժմ 'ի Ս. Երուսաղէմ իւրեանց բարեպաշտ ընտանեօք հանդերձ և մտադիր են սակաւ ժամանակէն ղինի յԱղէքսանդրիա երթալ: Երուսաղէմ զանազան Աղբութեանց մրցման տեղի լինելով՝ սոյնպիսի նշանաւոր Աղբայնոց ուխտաւորական այցելութիւնն 'ի Ս. Երուսաղէմ փառք և պարծանք է մեր Աղբին համար առաջի օտարաց :

— Սանտալճեան Գեր, Ստեփան Արքեպիսկոպոսն ժամանեց 'ի Ս. Աթոռու և ընդունուեցաւ ինչպէս սրբաւ եւ արժանի էր :

— Զատկական Տօներն կատարուեցան ամենայն խաղաղութեամբ և Ուխտաւորք

Աղբաց սիրան վերադառնալ: Ներկայ տարւոյս մէջ Եւրոպացի այցելուք եւ Ռուս Ուխտաւորք խիստ բազմաթիւ են: Եւրոպացիք գրեթէ անընդհատ կ'երթեւեկեն և ճանապարհ հիւանդանոցներով իւրեանց տեղերն կը հարցասիրեն, սակաւ ժամանակի մէջ աւելի շատ բանի կը տեղեկանան, քան թէ Ասիացիք իրենց երկարաժամանակեայ կեցողութեամբ Երուսաղէմ:

— Յունաց Ս. Պատրիարքն մտադրութիւն ունի պատրիարքական գործքերն Տեղապահի և Սինոդին յանձնել և ինքն 'ի Պօլս երթալով և տեղւոյն Պատրիարքի ու Ժողովոյն միջոցաւ կարեւոր պատրաստութիւններն աննկելով՝ այցելութեան ելնել 'ի Բուլղարիստան, 'ի Մոլտո — Վալարփա և անտի էթէ հնար իցէ, 'ի Ռուսաստան :

Սոյն այցելութեան զխաւոր նպատակն է ոչ միայն դրամական նպատակ ժողովել, այլ և յիշեալ տեղեաց երուսաղէմապետական կալուածներն, որոնք բարձուած են Բուլղարական խնդրոյն առթիւ, վերստին Երուսաղէմի Յունաց Վանուց դարձնել: Կը լսուի թէ այս մասին տեղական իշխաններէն արդէն զբաւոր խոստումներ եղած են Ս. Պատրիարքին, որ անպատճառ կը յաջողի, եթէ այցելութեան ելնէ այն երկիրներն, ուր երկար ժամանակ ինքն առաջնորդական պաշտօն վարած է և ծանօթ է ժողովրդեան :